

արարիչ ամենայն արարածոց. ուստի եւ զհանգամանսն թարգմանեալ, ածե թափե Առաքեալն միանգամայն եւ ասէ՝ թէ *Նովաւ հաստատեցան ամենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, եթէ երեւելիք եւ եթէ աներեւոյթք, եթէ այթոռք, եթէ տերութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ պալրութիւնք*<sup>բ</sup>: 24 Եւ խոնարհագոյն յայտնագոյն առնէր զասացեալսն. *Չի ինքն է անդրանիկ ի մեռելոց, պի եղիցի յամենայնի ինքն յառաջացեալ. պի նմա հաճեցաւ ամենայն լրութիւն աստուածութեանն*<sup>1</sup> *բնակել, եւ կամ նովաւ կատարել պամենայն, պի արասցէ խաղաղութիւն արեամբ խաչիւն իւրով, նովաւ այն որ ինչ յերկինս, եւ որ ինչ յերկրի*<sup>ա</sup>: 25 Չի չարչարանաւք Տեառն Զրիստոսի միածին Որդւոյն Աստուծոյ՝ ամենայն ի նոյն ժողովեցաւ որ յերկինս եւ որ յերկրի:

26 Զանգի մեծութիւն Աստուծոյ արար զամենայն, եւ կացոյց զմարդն տեր ամենայնի. հրամայեաց եւ բազմացան: 27 Ապա կացոյց իշխանս եւ կարգեաց առաջնորդս: 28 Իսկ յորժամ զպատուիրանազանցութիւնն<sup>2</sup> գործեցին առ զամ մի, անկան յիշխանութենէ՝ զոր առեալյառաջն ունէին: 29 Իսկ յերկրորդին՝ լոկ միայն վասն կարաւտութեանն պիտոյից ետ իմիք իշխել, եւ իմիք չիշխել. զի գոնեայ ապա յետոյ յետուստ իշխելովն ծանիցուք զշնորհն, եւ չիշխելովն զամենատեառնն տերութիւնն զիտասցուք: 30 Իսկ ո՞վ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութեանն եւ կամ մարմնոյ առողջութեանն եւ կամ կամարարութեանն կարաւտիցի, որ միայն միում միածնի Որդւոյն Աստուծոյ վայել է: 31 Իսկ մարդկանն, ոչ առ ամենեսին մեծութիւնն, եւ ոչ առ բնաւ աղքատութիւնն. եւ ոչ միշտ մեծք, եւ ոչ ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք եւ կամաւ աղքատացեալք: 32 Ոմանց ծնեալ, եւ ոչ սնուցեալ. ի չափ հասուցեալ, եւ անարգեալ թշնամանաւք: 33 Ո՞վ իցէ՝ որ սիրեաց զհիւանդութիւնն եւ ատեաց զառողջութիւնս. յամենայնի պակասեալք եւ ոչ կարաւտեալք: 34 Կեսք ի կռապաշտութեան եւ ի սպանութիւնս, ի պոռնկութեան եւ ի բազմազգի չարիս կաշկանդեալք զմածեալ կան. կեսք մոլորեալք եւ դանդաչունս մտաւք, ընդ պատահարաւք կապեն զամենայն, եթէ զբարի եւ եթէ զչար:

35 Իսկ յորս արեզակն արդարութեան զլուսաւորութիւն հաւատոցն ծագէ, եւ զմեզ տգիտութեանն խաւարին սեւութեամբն հալածէ, նոքա հանապազ յանդիմանեն զստութիւնս եւ զմոլորութիւնս: 36 Եւ նախ իբրեւ գործովք եւ արինակ բարեաց յանձինս ցուցանելով, եւ ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով ի հաւատոցն յերրորդութենէն զաւրութեան արարչութեանն, եւ ապա զանձինս սրբութեամբ եւ զգաստութեամբ եւ պար-

բ Յմմտ. Կող. Ա 16:

1 Յօր. չիք աստուածութեան

ա Յմմտ. Կող. Ա 18-20:

2 Յօր. մի պատուիրանաւանդութիւնն. տէ՛ս Դպր. Ե, Գլխ. ԻԸ: